ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի) գործուղման արդյունքների մասին

1. **Անունը, ազգանունը.**

Գեորգի Ավետիսյան

2. **Զբաղեցրած պաշտոնը.**

Հայաստանի Հանրապետության կառավարությանը ենթակա սննդամթերքի անվտանգության տեսչական մարմնի ղեկավար

3. **Գործուղման վայրը և ժամկետները.**

Արաբական Միացյալ Էմիրություններ (Աբու Դաբի), 2019 թվականի դեկտեմբերի 8-12-ը ներառյալ

4. **Հրավիրող կողմը.**

ՄԱԿ-ի Պարենի և գյուղատնտեսության կազմակերպություն և Առողջապահության համաշխարհային կազմակերպություն

5. **Գործուղման նպատակը (աշխատանքային ո՞ր խնդրի լուծման համար էր նախատեսված գործուղումը).**

Սննդամթերքի անվտանգության վտանգների ծանուցման համակարգերի ոլորտում փորձի փոխանակում

6. **Քննարկված թեմաները.**

ա) Սննդամթերքի անվտանգության վտանգների ծանուցման համակարգերը Եվրասիայում, Ասիայում, Մերձավոր արևելքում, Աֆրիկայում և նրանց միջև համագործակցության հարցերը INFOSAN-ի շրջանակներում,

բ) լիստերիոզ և սալմոնելոզ հիվանդությունների տարածվածությունը և նրանց դեմ պայքարի եղանակների միջազգային փորձը

7. **Հանդիպումները, ելույթները, բարձրացված կամ քննարկված հարցերը.**

Տեղի է ունեցել հանդիպում Եվրոպական միությունում սննդամթերքի և կերերի անվտանգության արագ արձագանքման համակարգի (RASFF) պատասխանատուի հետ: Քննարկվել են այդ և նմանատիպ համակարգերին Հայաստանի Հանրապետության

անդամակցության հարցը, ինչպես նաև այդ համակարգերը որպես մեկ միասնական հարթակ ձևավորելու խնդիրները:

8. Հանդիպման կամ հավաքի ժամանակ ընդունված որոշումները, պայմանավորվածությունները, ստորագրված փաստաթղթերը.

---

9. Առաջարկությունները, դրանց ընթացք տալու վերաբերյալ առաջարկները՝ եղանակը, ձևը, ժամկետները, պատասխանատուները, ակնկալվող արդյունքները.

---

10. Ստորագրությունը, ամսաթիվը:

13.12.2019թ